
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Հիմնադրվելով 1943 թվին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը շարունակում է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները և առաջ մղելով գիտական միտքը՝ դառնում է նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոնը, որտեղ համակարգված աշխատանքներ են ծավալվում լեզվի հետազոտության հիմնարար ուղղություններով, տասնամյակների ընթացքում ստեղծվում են գիտական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ աշխատություններ, պատրաստվում են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող և հմուտ լեզվաբաններ:

Ինստիտուտի տարբեր սերունդների գիտաշխատողներ զբաղվել ու զբաղվում են հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությամբ, գրական արևելախաչերենի ու արևմտախաչերենի քննությամբ, գիտնականների հետաքրքրությունների ոլորտում են նաև գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը, կարևորվում է ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառաբանների և տերմինաբանների ստեղծումը: Ինստիտուտի աշխատակիցները հեղինակել են ընդհանուր-տեսական և հայերենի կառուցվածքի ու պատմական զարգացման առանձին հարցերի վերաբերող մենագրական ու խմբային աշխատություններ, մշակել կամ առաջադրել են հայ քերականագիտության զարգացման համար կարևոր սկզբունքներ:

Զգալի աշխատանքներ են կատարվել ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի և գործառության հետազոտության ուղղությամբ: Այս ոլորտում լայն կիրառություն են ստացել ուսումնասիրության նոր, հատկապես կառուցվածքային, վիճակագրական, փորձառական մեթոդներ, լեզվի հետազոտության համակարգչային ծրագրեր, նոր և նորագույն տեխնոլոգիաներ: Բազմաթիվ մենագրություններում ու ժողովածուներում լուսաբանվել են լեզվական կառուցվածքի տարբեր հարցեր, կատարվել է բառապաշարի, հնչյունական, հոլովման և խոնարհման ենթահամակարգերի, քերականական առանձին կարգերի ու առանձին խոսքի մասերի ուսումնասիրություն: Այդ ամենի արդյունքներն ամփոփված են «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակադեմիական քերականության մեջ, որը պարունակում է լեզվական բոլոր մակարդակների մանրամասն նկարագրությունը: Նշանակալի են հայոց լեզվի զարգացմանը և կառուցվածքին, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներին, իմաստաբանությանը և բառակազմությանը (Գ. Չահուկյան, Է. Աղայան), ժամանակակից գրական հայերենի քերականությանը, բային ու անվանական խոսքի մասերին, չթեքվող խոսքի մասերին, դրանց բառական ու քե-

րականական հասկանիչների փոխհարաբերությանը (Ս. Աբրահամյան, Գ. Գարեգինյան), ժամանակակից հայերենի շարահյուսությանը, շարահյուսական կառուցվածքի առանձին միավորների, հարաբերությունների ու հասկացությունների (Վ. Առաքելյան, Ն. Պառնասյան), հնչյունաբանությանը, հնչյունային ու հնչույթային համակարգերին, շեշտի և հնչերանգի առանձնահատկություններին (Ա. Խաչատրյան, Ռ. Թոխմախյան, Ա. Արամյան) նվիրված հիմնարար աշխատությունները: Քննվել են նաև ժամանակակից հայերենի բառապաշարին, նրա զարգացման ու հարստացման միտումներին ու հնարավորություններին, նորաբանություններին, փոխառություններին ու պատճենումներին առնչվող հարցեր, հետազոտվել են բառակազմական ու իմաստաբանական իրողություններ (Հ. Օհանյան, Ս. Էլոյան):

Ոճագիտության ասպարեզում կատարվել է գործառական ոճերի և քերականական ու ձևաբանական ոճաբանության հարցերի քննություն (Ռ. Մկրտչյան): Ստեղծվել են գեղարվեստական գրականության լեզվին վերաբերող աշխատություններ, քննվել են շարահյուսությանն առնչվող ոճաբանական հարցեր՝ դարձվածքների, արտահայտչական միջոցների, բառակազմության ոճական հնարավորությունները, հայերենի ժողովրդախոսակցական տարբերակային առանձնահատկությունները:

Մի շարք աշխատություններ են նվիրվել տեխնիկական, բժշկագիտական, հասարակական-քաղաքական, գրականագիտական, թատերագիտական, լեզվաբանական, գյուղատնտեսական, ռազմական, կրոնակեղեցական տերմինաբանության ծագման և զարգացման պատմությանը: Գիտատեսական խնդիրների քննությանը զուգընթաց առաջին անգամ տերմինաբաններ, տերմինաբանական բառարաններ են կազմվել գիտության նորագույն ճյուղերի գծով (ֆիտոցենոլոգիա, մոլեկուլային ֆիզիկա, շրջակա միջավայրի պահպանություն, դիվանագիտություն, տարազանություն), հրատարակվել են ֆենոլոգիայի և գոյապահպանության հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարանները: Կազմվել է «Հայոց լեզվի գիտատեխնիկական տերմինաբանություն բառարան-տեղեկատու»:

Հայագիտության ավանդական ուղղությունների ընդլայնմանն ու զարգացմանը զուգընթաց հետազոտություններ են ծավալվել հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության (հրատարակվել է փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծությանը վերաբերող աշխատություն), տեքստի լեզվաբանության, մաթեմատիկական լեզվաբանության ուղղություններով, զարգացման նոր մակարդակի է բարձրացել փորձառական հնչյունաբանությունը և այլն:

Զգալի աշխատանքներ են կատարվել ընդհանուր և համեմատական լեզվաբանության բնագավառում: Ստեղծվել են ընդհանուր և համեմատական լեզվաբանության հարցերին ու պատմությանը նվիրված հիմնարար աշխատություններ (Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Է. Աղայան, Գ. Զահուկյան): Կարևոր արդյունքներ են ձեռք բերվել ընդհանուր լեզվաբանական կաղապարի մշակման, լեզվական միավորների ու մակարդակների փոխհարաբերության, լեզվաբանական կարգերի սահմանման ու դասակարգման, լեզուների հեռավոր ցեղակցության ուսումնասիրության և

նոստրաստիկ լեզվաբանության ուղղությամբ: Քննության են առնվել հայերենի և Առաջավոր Ասիայի հին լեզուների առնչությունները, հարևան հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների հետ հայերենի բազմապիսի շփումները (Գ. Ջահուկյան, Գ. Ղափանցյան, Լ. Հովհաննիսյան, Վ. Համբարձումյան, Մ. Աղաբեկյան): Կարևոր է նաև լեզվի ձևայնացված քննության սկզբունքների ու մեթոդների մշակումը և դրանց կիրառումը հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրության մեջ (Ռ. Ուռուսյան, Լ. Հովսեփյան, Վ. Զիհանյան):

Կատարվել են ուսումնասիրություններ՝ նվիրված լեզուների տիպաբանությանը և պրագմալեզվաբանությանը (Է. Աթայան):

Լայն ուշադրության են արժանացել հայ լեզվաբանության պատմության հարցերը: Հրատարակվել են հայ լեզվաբանության և հայ քերականության պատմությանը նվիրված աշխատություններ (Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Գ. Սևակ): Մենագրություններ են նվիրվել լեզվաբանության զարգացման առանձին բնագավառներին:

Նշանակալից են ձեռքբերումները հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում: Հավաքվել է փաստական հարուստ նյութ, ստեղծվել են ինչպես հայոց լեզվի ամբողջական պատմությանը (Հ. Աճառյան, Մ. Ղազարյան), այնպես էլ նրա զարգացման առանձին շրջանների և առանձին բնագավառների վերաբերող աշխատություններ (Գ. Ջահուկյան, Վ. Առաքելյան, Ա. Աբրահամյան, Մ. Ղազարյան, Է. Աղայան, Լ. Հովսեփյան, Ա. Սարգսյան): Ուշադրության կենտրոնում են եղել այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսիք են հայերենի զարգացման փուլերի ժամանակագրական սահմանների և բնորոշ առանձնահատկությունների որոշումը, գրական լեզուների ձևավորման ու գործառության, դրանց բարբառային հիմքերի զարգացման և մշակման հիմնական միտումների բացահայտումը (Գ. Ջահուկյան, Լ. Հովսեփյան, Վ. Համբարձումյան):

Լեզվի պատմաբանները ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում գրաբարի, միջին հայերենի, վաղ աշխարհաբարի բառապաշարային շերտերին, դրանց գործառական առանձնահատկություններին, իմաստային խմբերին: Բազմակողմանիորեն քննվել է V դ. մատենագրության բառապաշարը, դիտարկվել են նաև թարգմանական գրականության բառապաշարի ոճական, ժանրային յուրահատկությունները՝ թեմատիկ բազմազանությամբ հանդերձ: Ի հայտ են բերվել հարյուրավոր նոր բառեր, որոնց ստուգաբանությունը, իմաստների ճշտումը, գործառական նրբերանգների պարզաբանումը մեծ կարևորություն ունեն լեզվի պատմության համար: Արժեքավոր են V դ. գրաբարի և հայ թարգմանական գրականության բառապաշարներին, գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննությանը, նոր հայկազյան բառարանում չվկայված բառերին (Լ. Հովհաննիսյան), հայոց լեզվի համեմատական բառագիտությանը և լատինաբան հայերենին (Վ. Համբարձումյան) նվիրված մենագրությունները: Ավարտվել է VI–VIII դդ. հին հայերենի լիակատար էլեկտրոնային բառարանի կազմումը (Ա. Սարգսյան):

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ոլորտում հատկապես արժեքավոր է միջին հայերենի պատմությանը նվիրված «Ակնարկներ մի-

ջին գրական հայերենի պատմության» երկհատոր աշխատությունը (Հ. Մուրադյան, Լ. Հովսեփյան, Մ. Մուրադյան, Ս. Անթոսյան, Պ. Վարդապետյան, Լ. Կարապետյան):

Ընդհանուր առմամբ՝ տարածամանակյա հայեցակետով լուսաբանվել են լեզվական կառուցվածքի առանձին մակարդակների, ինչպես նաև քերականական առանձին կարգերի ու առանձին խոսքի մասերի զարգացման հարցերը: Հնչյունական, հոլովման, խոնարհման համակարգերի, բառակազմության պատմական հետազոտությունների արդյունքները ամփոփվել են «Հայերենի պատմական քերականություն» երկհատորյակում:

Մեծ ծավալի աշխատանք է կատարվել հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ (Հ. Աճառյան, Ա. Ղարիբյան, Հ. Մուրադյան, Է. Աղայան, Վ. Պետրոսյան, Ս. Բաղդասարյան, Ռ. Բաղրամյան, Կ. Դավթյան և ուրիշներ): Հրատարակվել են բազմաթիվ բարբառների վերաբերող մենագրություններ, մշակվել են հայ բարբառների հնչյունական, տիպաբանական և բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները (Ա. Ղարիբյան, Գ. Ջահուկյան):

Բարբառագիտական ուսումնասիրությունների բնագավառում նշանակալից է հայերենի բարբառագիտական ասլախի ստեղծման ձեռնարկումը: Կատարվել է ասլախի վերաբերյալ նյութերի հավաքում թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս գտնվող հարյուրավոր վայրերից, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր աղբյուրների հիման վրա, ընթանում են այդ նյութերի դասդասման, ուսումնասիրման և նկարագրության աշխատանքներ: Միաժամանակ նպատակ է դրված վերականգնելու բարբառների աշխարհագրական տեղաբաշխման պատմական պատկերը և, մասնավորապես, ցույց տալու հայ բարբառների՝ մինչև 1915 թ. եղած վիճակը: Ստեղծվել է «Հայերենի տարածքային տարբերակների շտեմարան», որը քարտեզագիր համակարգերի համակցությամբ հնարավորություն կտա կազմելու բարբառագիտական քարտեզներ: Մշակվել է նաև հայերենի բարբառների հնչազրերի հիմնօրինակը:

Փորձարկվել են հայերենի բարբառների բառիմաստային և բառային գուգարանությունների տեղեկատվական հենքերը: Դրանք լիովին բավարարում են առաջադրվող պահանջները. լեզվաբանը անհրաժեշտության դեպքում կարող է դիտարկել՝ ա) հենքում գրանցված խոսվածքը կամ խոսվածքները, բ) ասլախի ծրագրով տրված գրական եզրի բառային ծավալումը խոսվածքում կամ խոսվածքներում, գ) ասլախի ծրագրով տրված գրական եզրի և նրա բարբառային համարժեքի ծավալումը խոսվածքում կամ խոսվածքներում:

Հարուստ ավանդույթներ ունի հայ բառարանագրությունը: Հայերենագիտության այս բնագավառը լեզվի ինստիտուտը համալրել է բացատրական, երկլեզվյան-թարգմանական բառարաններով, ստեղծել հոմանիշների (Ա.Սուքիասյան), հականիշների, լեզվաբանական, շրջուն (հանգաբառարան), հաճախականության, տարբեր հեղինակների լեզվի, բարբառային, տերմինաբանական, հայոց լեզվի նորարանությունների ուղղագրական բառարաններ: Հրատարակվել են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (քառահատոր, ԽՍՀՄ պետական մրցանակ՝ 1946 թ.),

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (քառահատոր), «Ռուս-հայերեն» (քառահատոր) և «Հայ-ռուսերեն» թարգմանական բառարանները, բարբառային բառերի (յոթ հատոր), լեզվաբանական, հայոց լեզվի հաճախականության, գոյապահպանության, ֆենոլոգիայի հայերեն-անգլերեն-ռուսերեն բացատրական բառարանները: Ռուս-հայերեն բառարանի համար Ա. Ղարիբյանը 1972 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Հրատարակվել են հայ բառարանագրության պատմությանը (XVII դ. վերջ–XIX դ.) և գրաբարի բառարանագրությանը նվիրված մենագրություններ:

1962 թվականից ինստիտուտում կազմվում և հրատարակվում են հեղինակային համաբարբառներ, որոնցում այբբենական կարգով ներկայացվում են տվյալ երկիր բոլոր բառերը՝ համապատասխան գործածություններով: Համաբարբառներն անհրաժեշտ սկզբնաղբյուրներ են լեզվաբանության, գրականագիտության, պատմագիտական, ազգագրագիտական հետազոտությունների համար: Լույս է տեսել գրաբար ինքնուրույն գրականության հեղինակային համաբարբառների ավելի քան 40 հատոր, պատրաստ են մի շարք համաբարբառների էլեկտրոնային տարբերակները:

Աշխատանքներ են ընթանում հայերենագիտական ուսումնասիրությունների մեջ նոր և նորագույն տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ, մասնավորապես՝ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ մշակվել է հայոց լեզվի համակարգչային հիմնօրինակը:

Մտեղծվել է ժամանակակից հայերենի (արևելահայ և արևմտահայ տարբերակներ) բառապաշարի, այլև գրաբարի՝ ձևաբանական բնութագրիչներով համակարգչային շտեմարան, որն օգտագործվում է գրաբար և աշխարհաբար տեքստեր խմբագրելու և սրբագրելու համար Abbyy ֆիրմայի FineReader համակարգում:

Մշակվել է ժամանակակից հայերենի բայերի շտեմարան Access միջավայրում. բոլոր բայերի համար նշվում են խոնարհման հարացույցը, ձևային բառակազմական կաղապարը, բառարանային բնութագրերը: Համակարգը հնարավորություն է ընձեռում ավտոմատ կերպով առանձնացնել ցանկացած ձևույթ պարունակող, ցանկացած կաղապար կամ բնութագիր ունեցող բառերի ամբողջությունը:

2003 թվականից ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» պարբերականը, որի նպատակն էր անդրադառնալ առհասարակ լեզվի և լեզվաբանության առանցքային և զարգացման հեռանկարի տեսանկյունից առավել ուշագրավ խնդիրների և հարցերի լուսաբանմանը (լույս է տեսել տասնմեկ համար):

Լեզվի ինստիտուտը կազմակերպել է միջազգային հայերենագիտական գիտաժողովներ, 2006 թվականից կազմակերպում է «Ձահուկյանական ընթերցումներ», նաև երիտասարդ լեզվաբանների հանրապետական ամենամյա գիտական նստաշրջաններ՝ հանրապետության բուհերի, Արցախի ներկայացուցիչների, այլև արտերկրի հայազետների մասնակցությամբ:

Ինստիտուտի աշխատակիցները գործուն մասնակցություն են ունենում հանրապետական և միջազգային գիտաժողովներին, գիտական խնդիրներ-

րից բացի՝ անդրադառնում են խոսքի մշակույթի բարձրացման, ուղղախոսության և ուղղագրության նորմավորման, հայոց լեզվի հարստացման, գրական հայերենի անադարտության պահպանման հարցերին:

Ներկայումս Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտն ունի վեց բաժին՝ արդի հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, կիրառական լեզվաբանության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, արևմտահայերենի: Մրանցում ընդգրկված ավագ, միջին և կրտսեր սերնդի՝ մոտ վեց տասնյակ գիտաշխատողները շարունակում են ուսումնասիրություններ կատարել հայերենագիտության ավանդական բնագավառներում՝ նաև նպաստակ ունենալով ամբողջացնել գիտական մեծ արժեք ունեցող այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են հայոց լեզվի քառահատոր պատմությունը (լույս է տեսել Գ. Ջահուկյանի հեղինակած՝ նախագրային ժամանակաշրջանին նվիրված հատորը), արևմտահայերենի համակողմանի նկարագրությունը, հայերենի պատմական եռահատոր քերականությունը (լույս է տեսել պատմական հնչյունաբանությանը և բառագիտությանը նվիրված հատորները), հայ բարբառագիտական ատլասին վերաբերող ուսումնասիրությունները և այլն: Մյուս կողմից՝ աշխատանքներ են տարվում հետազոտական նոր խնդիրների առաջադրման, լեզվաբանական նոր մեթոդների և ուղղությունների արմատավորման ուղղությամբ (լեզվամշակութաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, լեզվի ձևականացված քննություն, խոսքի ավտոմատ վերլուծություն ու համադրություն, տեքստի մեքենական թարգմանություն և այլն):

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРҶЯНА

ВИКТОР КАТВАЛЯН

Резюме

В течение 70 лет своего существования Институт языка НАН РА являлся важным центром арменистики, где были созданы многочисленные труды, представляющие большую научную ценность, подготовлены кадры профессиональных лингвистов с широким диапазоном научных интересов. Институт занимался и продолжает заниматься исследованием структуры и функционирования, истории и сравнительного изучения грамматики армянского языка, изучением литературного восточноармянского и западноармянского, важное значение уделяется вопросам нормирования литературного языка, развития терминологии, дидактической лингвистики, создания этимологических, двуязычных, диалектных словарей и справочников. В Институте проводится систематическая работа в фундаментальных направлениях изучения языка, разрабатываются и выдвигаются важные принципы для развития арменистики, предлагаются новые научно-исследовательские задачи, внедряются новые направления и лингвистические методы исследования.

HR. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

VICTOR KATVALYAN

S u m m a r y

In its existence of 70 years the Institute of Language of NAS RA has been an important center of Armenology, where many valuable scientific works have been created and proficient linguists with a wide range of interests were qualified. The Institute has always studied the structure and usage, the history and comparative grammar of Armenian, the analysis of Eastern and Western Armenians. It also stresses the normalization of rules of the literary language, elaboration of terminology, the issues of educational linguistics and compiles etymological, bilingual, dialectal and terminological dictionaries. Coordinated efforts are made in the fundamental direction of language study, and important principles of Armenian grammatical science are being developed or provided. Much work is done to propose new issues of study and to enroot new linguistic methods and directions.